ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհրդի 20.04.2023թ. նիստի

ք.Երևան 20.04.2023թ.

Նիստին մասնակցում էին Դիտորդ խորհրդի հետևյալ անդամները՝

1. Դիտորդ խորհրդի նախագահ՝ Արսեն Չիտչյան
2. Դիտորդ խորհրդի անդամ՝ Լևոն Պետրոսյան
3. Դիտորդ խորհրդի անդամ՝Գևորգ Ավագյան
4. Դիտորդ խորհրդի անդամ՝ Վահագն Ավագյան
5. Դիտորդ խորհրդի անդամ՝ Հովհաննես Եղյան
6. Դիտորդ խորհրդի անդամ՝ Խաչիկ Նազարյան
7. Դիտորդ խորհրդի անդամ՝ Տիգրան Սահակյան

Քվորումն ապահովված է, և Դիտորդ խորհրդի նիստը իրավազոր է որոշումներ ընդունել օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:

Օրակարգում՝

1.Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա՝ ինքնակարգավորվող կազմակերպության Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝ Ալեքսանդր Կարակեյանի և Իզաբելլա Ցամաքյանի լիազորությունները դադարեցնելու հարցի քննարկում :

2.Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա՝ ինքնակարգավորվող կազմակերպության Հաշվիչ հանձնաժողովի նոր անդամների ընտրության հարցի քննարկում :

3.Ընթացիկ հարցեր :

Մինչև օրակարգի հարցի քննարկմանն անցնելը, <<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանը հանդես եկավ ողջույնի խոսքով:

Դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանը ներկայացրեց օրակարգի 1-ին հարցը, այն է՝ Հաշվիչ հանձնաժողովի անդամ Ալեքսանդր Կարակեյանի անդամակցությունը ՝ՍԳԿԿ՝ ԻԿ կազմակերպությունում 2023թ. ապրիլի 7-ից դադարեցվել է, իսկ Իզաբելա Ցամաքյանը երկար ժամանակով չի գտնվելու Հայաստանի Հանրապետությունում, ուստի <<ՍԳԿԿ>> ԻԿԿ Կանոնադրության 9.23 կետի համաձայն պետք է Հաշվիչ հանձնաժողովի նշված երկու անդամների լիազորությունները դադարեցնել:

Հարցը դրվեց քննարկման:

Արտահայտվեցին. Լ.Պետրոսյանը, Տ.Սահակյանը,Հ.Եղյանը,Գ.Ավագյանը, Վ.Ավագյանը:

<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Դադարեցնել ՝ՍԳԿԿ՝ ԻԿ կազմակերպության Հաշվիչ հանձնաժողովի անդամներ Ալեքսանդր Կարակեյանի և Իզաբելլա Ցամաքյանի լիազորությունները:

Որոշումը դրվեց քվեարկության.
Կողմ-7
Դեմ-0
Չեռնպահ-0
Որոշումն ընդունվեց միաձայն:

Դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանը ներկայացրեց օրակարգի 2-րդ հարցը և ՝ՍԳԿԿ՝ ԻԿԿ Հաշվիչ հանձնաժողովի կազմը համալրելու համար առաջադրեց երկու թեկնածուներ ՝Անահիտ Ղազարյան և Արման Տոնոյան:

Հարցը դրվեց քննարկման:

Արտահայտվեցին. Լ.Պետրոսյանը, Տ.Սահակյանը,Հ.Եղյանը,Գ.Ավագյանը, Խ.Նազարյանը:

<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Հաստատել ՝ՍԳԿԿ՝ԻԿԿ Հաշվիչ հանձնաժողովի կազմը համալրելու համար առաջադրված Անահիտ Ղազարյանի և Արման Տոնոյանի թեկնածությունը:

Որոշումը դրվեց քվեարկության.

Կողմ-7
Դեմ-0
Չեռնպահ-0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Նախագահ՝ *Ա.Չիտչյան*

Քարտուղար՝ *Գ.Հովսեփյան*